

Կ-881-26.02.2021-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետում «0106 90 00 90» թիվը փոխարինել «0106 49 000» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «բ.» ենթակետում «նպատակային դրամական միջոցների,» բառերից հետո լրացնել «ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի համաձայն ստեղծված գյուղատնտեսական կոոպերատիվի կողմից ստացած նպատակային դրամական միջոցների,» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 1-ին կետի՝

- 1) «ա.» ենթակետում «հացահատիկաղյուղային» բառը փոխարինել «հատիկաղնդեղենային» բառով,
- 2) «ժ.» ենթակետում «անասնաբուծության» բառը փոխարինել «տավարաբուծության» բառով,
- 3) «ժդ.» ենթակետում «ծիաբուծության» բառից հետո լրացնել «գոմեշաբուծության» բառը,
- 4) «ժե.» ենթակետում «եղջերվաբուծության» բառից հետո լրացնել «ջայլամաբուծության» բառը:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) գյուղատնտեսական արտադրանք արտադրող է համարվում նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» և «Սպառողական կոոպերացիայի մասին» օրենքների համաձայն ստեղծված գյուղատնտեսական կոոպերատիվը կամ սպառողական կոոպերատիվը՝ իր անդամների (մասնակիցների) կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքի 1-ին հոդվածը կիրառվում է նաև 2018 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ, իսկ սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածները կիրառվում են նաև 2021 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ:

Տեղեկանք

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետում «0106 90 00 90» թիվը փոխարինել «0106 49 000» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «բ.» ենթակետում «նպատակային դրամական միջոցների» բառերից հետո լրացնել «ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի համաձայն ստեղծված գյուղատնտեսական կոոպերատիվի կողմից ստացած նպատակային դրամական միջոցների» բառերը: 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

«ա.» ենթակետում «հացահատիկալոռային» բառը փոխարինել «հատիկարնդեղենային» բառով,

«ժ.» ենթակետում «անասնաբուծության» բառը փոխարինել «տավարաբուծության» բառով,

«ժդ.» ենթակետում «ծիաբուծության» բառից հետո լրացնել «զոմեշաբուծության» բառը,

«ժե.» ենթակետում «եղջերվաբուծության» բառից հետո լրացնել «ջայլամաբուծության» բառը:

Հոդված 23. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասում՝

3. 1-ին կետի՝

5) «ա.» ենթակետում «հացահատիկալոռային» բառը փոխարինել «հատիկարնդեղենային» բառով,

6) «ժ.» ենթակետում «անասնաբուծության» բառը փոխարինել «տավարաբուծության» բառով,

7) «ժդ.» ենթակետում «ծիաբուծության» բառից հետո լրացնել «զոմեշաբուծության» բառը,

8) «ժե.» ենթակետում «եղջերվաբուծության» բառից հետո լրացնել «ջայլամաբուծության» բառը:

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) գյուղատնտեսական արտադրանք արտադրող է համարվում նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» և «Սպառողական կոոպերացիայի մասին» օրենքների համաձայն ստեղծված գյուղատնտեսական կոոպերատիվը կամ սպառողական կոոպերատիվը՝ իր անդամների (մասնակիցների) կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) գյուղատնտեսական արտադրանք արտադրող է համարվում նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» և «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքների համաձայն ստեղծված գյուղատնտեսական կոոպերատիվը կամ սպառողական կոոպերատիվը՝ իր անդամների (մասնակիցների) կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ:

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքի 1-ին հոդվածը կիրառվում է նաև 2018 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ, իսկ սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածները կիրառվում են նաև 2021 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-881-26.02.2021-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	1-ին հոդված	<p>Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով փոփոխություն կատարել Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետում, և դրան համապատասխան վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:</p> <p>Մասնավորապես, առաջարկվում է Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետում «0106 90 00 90» թիվը փոխարինել «0106 49 000» թվով:</p> <p>Նշյալ առաջարկությունը հիմնավորվում է նրանով, որ գյուղատնտեսության մեջ օգտագործվող միջատների ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից, մինչդեռ իրացման փուլում այդ միջատների իրացումը ԱԱՀ-ից ազատելու համար Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետում նշվել է ԱՏԳ ԱԱ 0106 90 00 90 ծածկագիրը, որին դասվում են ոչ թե միջատները, այլ այլ կենդանիները:</p> <p>Արդյունքում ներկայումս ստացվել է, որ ԱԱՀ-ից ազատված է ոչ թե միջատների իրացումը, այլ այլ կենդանիների իրացումը:</p> <p>Միաժամանակ, առաջարկվում է նշյալ փոփոխությունը կիրառել հետադարձ ուժով՝ սահմանելով, որ այն տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում և փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>

2.	Կառավարություն	1-ին և 3-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 1-ին և 3-րդ հոդվածները միավորել մեկ հոդվածում, քանի որ երկու հոդվածներում էլ խոսքը Հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին է:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	2-րդ հոդված	Առաջարկվում է Հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներում կատարվող փոփոխություններն ու լրացումները նախատեսել ըստ հերթականության, մասնավորապես՝ Նախագծի 2-րդ հոդվածի կարգավորումները ներկայացնել 1-ին հոդվածի տեսքով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	2-րդ և 3-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներից «<<» հապավումը հանել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: